ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# ԾՆՈՒՆԴՈՎ ՍՅՈՒՆԵՑԻ ԵՐԵՎԵԼԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ

*Սյունյաց աշխարհից, ի տարբերություն հայաշխարհի այլ շրջաններից, արտագաղթ համեմատաբար քիչ է եղել։ Աշխարհի տարբեր երկրներում գործել են սյունեցու արմատներ ունեցող մշակույթի և հումանիտար գիտությունների բնագավառների տասնյակ գործիչներ։ Նրանց թվում են ռուսական հումանիտար գիտությունների բնագավառի չորս գիտնական Մինասյան ընտանիքից, լատվիական բալետի ականավոր գործիչ Ելենա Տանգիևա-Բիրզնիեցեն, թուրքմենական պարուհի Էդիսա Սարվազյանը, բուլղար դաշնակահարուհի Ջուլիա Գանևան, ռուս կինոդերասան Դմիտրի Խառատյանը և այլք, ինչպես նաև արտերկրում գործած ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ մի քանի օտարազգի գործիչներ։*

***Բանալի բառեր՝*** *սյունեցիներ, սյունյաց արմատներ, Մինասյաններ, բալետի պարողներ, Սյունիքում ծնված օտարազգիներ։*

Տարիներ շարունակ ուսումնասիրելով հայկական գենի դրսևորումները Հայաստանի սահմաններից դուրս՝ նկատել ենք, որ հակումը դեպի արտագաղթը և օտար միջավայրերում գործունեություն ծավալելը հայաշխարհի տարբեր շրջանների միջև համանման չէ։ Որոշ տարածքներից արտագաղթերը, պայմանավորված արտաքին և ներքին տարբեր գործոններով, մշտապես եղել են հաճախադեպ, իսկ որոշ տարածքներից էլ՝ հազվադեպ։

Սյունյաց աշխարհը պատկանում է երկրորդին։ Մեծ աշխարհից դարեր շարունակ հիմնականում կղզիացած այս լեռնաշխարհի մարդիկ, թեև հայաշխարհի մյուս շրջանների բնակիչների պես նույնպես պարբերաբար ենթարկվել են թշնամական հարձակումների և կրել ներքին բնույթի այլևայլ դժվարություններ, սակայն, թվում է, ավելի ամուր են կառչած մնացել իրենց հողից։ Այդ իսկ պատճառով Սյունիքում ծնված և ծնունդով սյունեցի արտերկրի գործիչների թիվը համեմատաբար քիչ է։

Մեր հաղորդման մեջ կներկայացնենք օտար միջավայրերում գործած սյունեցի և զանգեզուրյան արմատներ ունեցող մի քանի գործիչների, մեր նախասիրությամբ՝ մշակույթի և հումանիտար գիտությունների բնագավառներից։

Հատկանշական է, որ ի տարբերություն հիմնականում Ռուսաստան և մասամբ նաև՝ Եվրոպա տարագրվող արևելահայության մեծ մասի, Ռուսական կայսրության Ելիզավետպոլի նահանգի մաս կազմած Սյունիքի հայերը հիմնականում արտագաղթել են դեպի արևելք, առաջին հերթին՝ աշխարհագրականորեն ավելի մոտ գտնվող Բաքու, այնտեղից էլ՝ Միջին Ասիա։ (Երբեմնի բազմամարդ բաքվահայության մի մասի արմատները Սյունյաց աշխարհից են, սակայն այդ մասին աղբյուրներում հաճախ չի նշվում, ուստիև առավել խորը պրպտումները կարող են բացահայտել ավելի մեծ թվով ծագումով սյունե-

ցի գործիչների, որոնք ծնվել են Բաքվում և Միջին Ասիայում)։ Հիմնականում այս երկու վայրերից էլ շատ հայեր տեղափոխվել են տարբեր երկրներ, մինչև անգամ՝ Չինաստան։ Հայտնի է, որ 1917 թվականի բոլշևիկյան հեղաշրջումից հետո հիմնականում Չինաստանի հյուսիսում հաստատվել են արևելահայ գաղթականներ, որոնց ճնշող մեծամասնությունը եղել է Կովկասի հայաբնակ շրջաններից և Արևելյան Հայաստանի տարբեր գավառներից՝ Ջավախք, Արցախ և Սյունիք։ Նվազ է եղել Եվրոպայում հաստատված սյունեցիների թիվը։ Արդեն ուշ միջնադարում որոշ սյունեցիներ արտագաղթել են օսմանյան կայսրություն և հաստատվել մասնավորապես Զմյուռնիայում, ոմանք էլ՝ Եվրոպայում[1]։

Սիսիանի շրջանի Տոլորս գյուղի Մինասյան ընտանիքը ռուս խորհրդային հումանիտար գիտությունների բնագավառին պարգևել է չորս գիտնական։ Իրավաբանության դոկտոր **Նիկոլայ Միքայելի Մինասյանը** (1911–1978) մասնագիտական կրթությունն ստացել է Բաքվում և Մոսկվայում, դասավանդել Ադրբեջանի համալսարանի իրավաբանության բաժնում, որտեղ հիմնել է միջազգային իրավունքի ամբիոնը։ Նիկոլայ Մինասյանի գիտական-մանկավարժական գործունեությունն անցել է Դոնի Ռոստովի համալսարանում, որտեղ նա 16 տարի եղել է պետական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ։ Հեղինակ է միջազգային իրավունքին նվիրված աշխատությունների և դասագրքերի։

Նիկոլայ Մինասյանի կրտսեր եղբայրը՝ փիլիսոփայության դոկտոր **Արտավազդ Մինասյանը** (1913–1993), նույնպես ծնված Տոլորս գյուղում, նմանապես իր անունն է թողել ռուսական գիտության և Դոնի Ռոստովի բուհական մանկավարժության պատմության մեջ։ Նույնպես կրթությունն ստանալով Բաքվում և Երկրորդ աշխարհամարտին մասնակցելուց հետո՝ Արտավազդ Մինասյանը 1952 թվականից հասարակական գիտություններ է դասավանդել Դոնի Ռոստովի բարձրագույն ուսումնական հաստատություններում, մասնավորապես՝ ինժեներա-շինարարական ինստիտուտում, որտեղ եղել է փիլիսոփայության ամբիոնի վարիչ և պրոֆեսոր։ Հեղինակ է փիլիսոփայությանը վերաբերող ռուսերեն աշխատությունների։ Ռոստովցի ֆիզիկոս և գրող Լիդիա Գորբատենկոն իր գրություններից մեկում Մինասյանին հիշել է որպես «անսովոր վառ անհատականություն և մարդ, որը մեծ դեր ունեցավ մեր աշխարհայացքի ձևավորման մեջ»։ Հանրագիտարանային գիտելիքների տեր և ճշմարիտ հայրենասեր Արտավազդ Մինասյանը կյանքի վերջում գրի է առել իր հուշերը՝ «Ինչպես ողջ մնացի» վերնագրով։ Այն անգլերեն թարգմանությամբ լույս է տեսել ԱՄՆ-ում՝ թոռան՝ Ալեքսանդր Գևորգյանի ջանքերով։ Հատկապես հետաքրքրական է հուշագրության առաջին մասը, որտեղ հեղինակը պատմում է իր զանգեզուրյան մանկության, գյուղում տիրող նահապետական բարքերի և ծանր կենսապայմանների, հատկապես՝ սովի մասին։

Արտավազդ Մինասյանի ուղին շարունակել են զավակները՝ փիլիսոփա-

1 Այսպես, Վենետիկի Սուրբ Խաչ եկեղեցում պահպանվել են երկու ծնունդով կապանեցիների շիրմաքարեր՝ «Ղաբանցի Եաւրուի որդի Պաղտասարի, որ յանգեաւ Փրկչին 1733, Հոկտեմբերի 24-ին, նաեւ իւր կողակցին Ակնէսին» և «Մարտիրոսի որդւոյ ղափանցի Պօղոսի, որ փոխեցաւ առ տեառն Աստուած յամի Փրկչին որ աստ գրի 1743, 17 Ապրիլի» արձանագրություններով (անձնական գրառում)։

յական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սերգեյ Մինասյանը** և փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր **Լարիսա Մինասյանը** (ծն. 1950, Բաքու)։ Վերջինս, լինելով մասնագիտությամբ ֆիզիկոս, զբաղվում է 20-րդ դարի տարրական մասնիկների ֆիզիկայի, ֆիզիկական վակուումի և տիեզերագիտության փիլիսոփայական վերլուծությամբ։ Տնտեսագիտության և ծառայության հարավ-ռուսական պետական համալսարանի ռոստովյան ինստիտուտի գիտական գծով պրոռեկտոր Լարիսա Մինասյանը հեղինակ է 130-ից ավելի գիտական աշխատությունների։

Հիշենք նաև, որ Լարիսա Մինասյանի որդին՝ վերոհիշյալ **Ալեքսանդր (Խաչատուր) Գևորգյանը**, նույնպես նվիրված է գիտությանը. նա Նյու Յորքի Սենթ Ջոնս համալսարանի Փիթեր Ջ. Թոբին քոլեջի տնտեսագիտության պրոֆեսորի ընթերակա է։

Սույն հաղորդումը գրելիս մեզ համար անակնկալ եղավ նկատել, որ սյունյաց արմատներ ունեցող հայազգի մշակութային գործիչների մեջ քանակով ամենից շատը բալետի արտիստներն են։ Աշխարհի տարբեր երկրներում հանդես եկած առնվազն հինգ նշանավոր բալետի պարող Սյունյաց աշխարհի շառավիղներ են։ Տպավորիչ է նաև նրանց աշխարհագրությունը՝ Լատվիա, Էստոնիա, Թուրքմենստան, Ռուսաստան, Կանադա, Գերմանիա։ Ժամանակագրորեն առաջինը լատվիական ազգային բալետի հիմնադիրներից **Ելենա Տանգիևա-Բիրզնիեցեն** է (1907–1965)՝ մեծանուն պարուհի, պարաստեղծ և պարուսույց, որն աշակերտել է հանրահռչակ պարուսույց Ագրիպինա Վագանովային և որին աշակերտել է բալետի մեծ պարող Միխայիլ Բարիշնիկովը։ Հայ-ռուսական ծագումով Տանգիևան սերել է Սիսիանի մելիքներից, որը, ինչպես հայտնի է, ղեկավարել են բռնակոթյան երկու նշանավոր տոհմեր, նախ՝ Մելիք-Սաֆրազյանները, ապա՝ Մելիք-Թանգյանները։ Պարուհու հայրը՝ Ալեքսանդր Տանգիևը, սերել է Բեկ Մելիք-Թանգյան ազնվական գերդաստանից, իսկ մայրական կողմից նա թոռնուհին էր 19-րդ դարի ռուս արձակագրուհի Ավդոտյա Պանաևայի, ուստիև զարմանալի չէ, որ թե՛ ռուսները, թե՛ հայերը նրան յուրային են համարում։ 2017 թ. Տանգիևա-Բիրզնիեցեի ծննդյան 110-ամյակի առթիվ Լատվիայում կրկին հիշել և մեծարել են իրենց բալետի ականավոր այդ գործչին։

Զանգեզուրյան արմատներով մեկ այլ պարուհի էլ գործել է մերձբալթյան մյուս հանրապետությունում՝ Էստոնիայում։ Տալլիննի «Էստոնիա» օպերայի և բալետի պետական թատրոնի բալետի մենապարուհիներից է եղել **Սվետլանա Բալոյանը**, որը ծնվել է 1942-ին, Անդիժանում (Ուզբեկստան), Արա և Գոհար Բալոյանների ընտանիքում։ Վաղ մանկուց բնակվել է Էստոնիայում, որտեղ հայրը՝ ծագումով գորիսեցի **Արա Բալոյանը**, աշխատել է որպես բժիշկ-ռենտգենաբան, նաև թարգմանել է գրքեր հայերենից էստոներեն։ Սվետլանան ավարտել է ծննդավայրի պարարվեստի ուսումնարանը, որոշ ժամանակ ապրել է Երևանում, փորձել հաստատվել հայկական բալետում, ինչն ապարդյուն է անցել։ Քսան տարի նա աշխատել է էստոնական բալետում, կատարել գլխավոր դերապարեր, արժանացել Էստոնիայի վաստակավոր արտիստուհու կոչման։ Այժմ բնակվում է ԱՄՆ-ում։

Ներկայումս ԱՄՆ-ում է բնակվում նաև թուրքմենական բալետի երբեմնի հայտնի պարուհի **Էդիսա Սարվազյանը** (ծն. 1944, Աշխաբադ), որն արմատ-

ներով Զանգեզուրի Ախլաթյան գյուղից է։ Հայրը՝ Ղազար Սարվազյանը, եղել է Սյունիքում կոմունիստական շարժման ակտիվ գործիչ։ Էդիսա Սարվազյանը Թուրքմենստանի վաստակավոր արտիստուհի էր, որը նախագահ Թուրքմենբաշիի՝ եվրոպական մշակութային հայտարարած պատերազմից հետո ստիպված է եղել հեռանալ երկրից։

Նշված երեք պարուհիներն էլ ծնվել են Հայաստանից դուրս, տարբեր քաղաքներում։ Հայտնի է, որ բալետը և օպերան քաղաքային, ավելին՝ մայրաքաղաքային երևույթ են, և նրա ականավոր գործիչները մեծ մասամբ քաղաքային միջավայրի ծնունդ են, սակայն լինում են սակավաթիվ բացառություններ։ Օպերային արվեստին Սյունյաց աշխարհը պարգևել է հանրահայտ երգչուհի Տաթևիկ Սազանդարյանին (ծնված Խնձորեսկում), իսկ բալետին՝ պարող ու բալետմայստեր **Մաքս (Մյասնիկ) Ռաթևոսյանին** (ծն. 1945)։ Վերջինս ծնվել է Սիսիանի շրջանի Բալաք գյուղում, սակայն մանկուց բնակվել է Երևանում, որտեղ էլ ստացել է մասնագիտական կրթությունը։ Նա հայ բալետում քիչ է աշխատել, քսան տարի շարունակ եղել է Մոսկվայի «Երիտասարդ բալետ» խմբի առաջին մենակատար։ 1991 թվականից Ռաթևոսյանն աշխատում է Կանադայում, դասավանդել է տարբեր բալետի դպրոցներում, հիմնել է «Համիլթոն բալե» խումբը, կատարել մի շարք բեմադրություններ։ Բալետի շնորհաշատ արտիստ է նաև Ռաթևոսյանի որդին՝ **Քրիստիան Ռաթևոսյանը** (ծն. 1970), որը ստեղծագործել է Ռուսաստանի, Ավստրիայի և Գերմանիայի թատրոններում, այժմ աշխատում է Բեռլինում[1]։

Սիսիանում ծնված օպերային երգիչ, տենոր **Գուրգեն Հովսեփյանը** (ծն. 1955) ճանաչված անուն է Սլովակիայում։ Ուսանել է Երևանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական ուսումնարանում և Մոսկվայի Գնեսինների անվան երաժշտական մանկավարժական ինստիտուտում։ Վեց տարի աշխատել է Սարատովի օպերային թատրոնում, հյուրախաղերով հանդես եկել Խորհրդային Միության բազմաթիվ քաղաքներում։ 1991 թ. Սլովակիայում մասնակցել է Բանսկա Բիստրիցայի պետական թատրոնի փառատոնին, որից հետո հրավիրվել է որպես մեներգիչ հանդես գալու Բրատիսլավայի օպերային թատրոնում։ 1993-ից սկսյալ 10 տարի շարունակ նաև Պրահայի ազգային թատրոնում երգել է Վերդիի փառատոների ժամանակ։ Գուրգեն Հովսեփյանը Բրատիսլավայի օպերայում դասավանդում է ձայնի վարպետություն, աշխատում է նաև իբրև ներկայացումների խորհրդատու, իսկ կոնսերվատորիայում դասավանդում է օպերային վոկալ։ Հովսեփյանի աշակերտներից շատերն այսօր երգում են եվրոպական տարբեր օպերաների բեմերում։ Նրանցից ոմանք իրենց երկացանկում ընդգրկում են հայկական երգեր։ Նրա աշակերտներից Ռոման Կրշկոն 2012-ին ստեղծել է «Հովսեփյանովցի» դասական վոկալ համույթը։

Նշենք նաև, որ Գուրգեն Հովսեփյանի ավագ որդին՝ **Ալեքսեյ Հովսեփյանը**, Մոսկվայում նորաձևության նկարիչ է, իսկ կրտսերը՝ **Վիլյամ Հովսեփյանը**, Բրատիսլավայում ավարտել է միջազգային հարաբերությունների համալսարանը, աշխատում է Ռուսաստանի և Ղազախստանի հետ համատեղ ծրագրերով։

Զանգեզուրյան արմատներ ունեն մասնավորապես ռուսական մշակույթի մի քանի հայազգի գործիչներ։ Կինոօպերատոր, ռեժիսոր և սցենարիստ,

1 Բոլոր նշված բալետի արտիստների մասին մանրամասն տե՛ս մեր «Հայերը համաշխարհային պարարվեստում» գրքում (Երևան, 2017, էջ 114-118, 120-122, 170-171)։

Արտավազդ Մինասյան

Սվետլանա Բալոյան

Գավրիլ Եղիազարով

Անահիտ Ոսկանյան

Ելենա Տանգինա Բիրզնիեցեն

Քրիստիան Ռաթևոսյան

Ջուլիա և Կոնստանտին Գանեներ

Դմիտրի Խառատյան

Արծվիկ Հարությունյան

Էլիզաբեթ Նեցկովա



Մաքս Ռաթևոսյան

Էդիսա Սարվազյան

Լարիսա Մինասյան

ՌԽՖՍՀ ժողովրդական արտիստ **Գաբրիել Եղիազարովի** (Գաբրիել Եղիազարյան, 1916–1988) ծննդավայրը նշվում է Բաքուն, սակայն հայտնի է, որ նա ծնվել է Կապանի Ձեյվա (այժմ՝ Դավիթ-Բեկ) գյուղում: Արմատներով Մեղրիից է ռուսական և ավստրիական բանաստեղծուհի, թարգմանչուհի, երաժշտագետ, դաշնակահարուհի և նկարչուհի **Էլիզաբեթ Նեցկովան** (ծն. 1922, Բաքու), որի իսկական անունն է Ելիզավետա Մնացականյան: Նրա հայրը բժիշկ և բանաստեղծ Արմեն Սյունին էր (Արկադի Մնացականյան): 1975-ից բնակվում է Ավստրիայում, գրել է ռուսերեն ու գերմաներեն արձակ և չափածո ստեղծագործություններ, նաև Հայաստանին նվիրված բանաստեղծական շարք: Գորիսում է ծնվել մոսկվաբնակ երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր **Իզաբելլա Յոյյանը** (1928–1996), որը դասավանդել է Մոսկվայի կոնսերվատորիայում, եղել արվեստաբանության համամիութեանական ինստիտուտի գիտաշխատող, զբաղվել ԽՍՀՄ և արտասահմանյան Արևելքի ու հայ երաժշտության ուսումնասիրությամբ: Քչերը գիտեն, որ նույնպես զանգեզուրյան արմատներ ունի ռուս սիրված կինոդերասան **Դմիտրի Խառատյանը** (ծն. 1960), ծնված Ուզբեկստանի Ալմալիկ քաղաքում: Նրա նախնիները Մեղրիում մինչև 1917 թվականը տնօրինել են «Տարոն» առևտրի տունը: Չնայած քառորդ հայկական արյանը՝ Դմիտրի Խառատյանը մշտապես շեշտում է իր հայկական ծագումը, իսկ տարիներ առաջ նկարահանվել է նրա այցը Մեղրի, որի ժամանակ նա արտասանում է «Ողջույն, հայրենիք» խոսքերը: Կապանում է ծնվել փոփ երգչուհի **Արծվիկ Հարությունյանը** (ծն. 1984), որը հինգ տարեկանից բնակվում է Մոսկվայում: Նրա անունը հատկապես հայտնի դարձավ 2017-ին, երբ Հայաստանը ներկայացրեց Կիևում կայացած «Եվրատեսիլ-2017» մրցույթում:

Ծնունդով սյունեցի գործիչներ եղել են նաև այլ երկրներում: Բուլղարական դաշնակահարուհի **Ջուլիա Գանևայի** կենսագրության մեջ ևս նշվում է, որ նա ծնվել է Բաքվում, սակայն իրականում նա ծնվել է Կապանում և մանկուց բնակվել Ադրբեջանում: Նրա օրիորդական ազգանունը մեզ հայտնի չէ: Մոսկվայի կոնսերվատորիայում ուսանելիս Ջուլիան հանդիպել է ապագա ամուսնուն՝ բուլղար դաշնակահար, հետագայում Բուլղարիայի ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Կոնստանտին Գանևին և 1950-ականներից բնակվել է Սոֆիայում: 1957-ից դասավանդել է Սոֆիայի կոնսերվատորիայում: Կոնստանտին և Ջուլիա Գանևները հանդես են եկել համերգային գործունեությամբ, հետագայում նվիրվել մանկավարժությանը, մի քանի տարի ապրել և աշխատել են Ճապոնիայում: Սոֆիայի կոնսերվատորիայի պրոֆեսոր, Բուլղարիայի վաստակավոր արտիստուհի Ջուլիա Գանևան վախճանվել է 2014 թվականին:

Ավելի քան երեսունհինգ տարի Ստոկհոլմում է բնակվում թարգմանչուհի **Լաուրա Դաուն Մինասյանը** (ծն. 1946, Բաքու): Նրա մայրը՝ Անահիտ Ոսկանյանը (1920–1986), ծնվել է Կապանի Չափնի գյուղում, որոշ ժամանակ հանդես է եկել Բաքվի հայկական թատրոնում որպես դերասանուհի: Լաուրա Մինասյանը կարճ ժամանակ բնակվել է Երևանում (մինչ այդ նա խոսել է միայն Սյունիքի բարբառով), այնուհետև Լենինգրադի համալսարանում ուսանել է քմեր (Կամբոջայի) լեզուն: Համալսարանում կամբոջական հեքիաթներին նվիրված նրա ռուսերեն աշխատությունները (անտիպ) մնում են եզակի աղբյուրներ քմերագիտության համար, քանի որ դրանց ստեղծումից մի քանի տարի անց Կամբո-

ջայում կարմիր քմերների կողմից շատ բան է ոչնչացվել կամբոջական մշակույթից։ Հետագայում հաստատվելով Շվեդիայում՝ զբաղվել է թարգմանություններով քմերից, ռուսերենից և հայերենից շվեդերեն։ Լաուրա Դաուն Մինասյանի թարգմանությամբ քմերից շվեդերեն լույս է տեսել կամբոջական հեքիաթների մի ժողովածու։ Ամուսնու՝ շվեդ ականավոր ազգաբան Օքե Դաունի հետ գրել է «Նոր-հին ցեղասպանությունը» հոդվածը, շվեդերենից ռուսերեն է թարգմանել Մեծ եղեռնի ժամանակ հայ փրկվածներին մեծապես օժանդակած շվեդ միսիոներուհի Ալմա Յուհանսոնի «Աքսորյալ մի ժողովուրդ» գրքույկը, նաև մեկ կամբոջական հեքիաթ՝ քմերից հայերեն[1]։

Վերջում հիշենք, որ հանգամանքների բերումով Սյունիքում են ծնվել մի քանի օտարազգի գործիչներ։ Ադրբեջանական կինոյի ազգությամբ հույն դերասանուհի, ստալինյան անհատի պաշտամունքի զոհ **Պամֆիլիա Թանաիլիդին** (1891–1937) ծնվել է Ելիզավետպոլի նահանգի Բաշքանդ՝ սյունյաց Մազրա կամ Բարձրավան գյուղում, որն այսօր կոչվում է Մուծք։ Գորիսում է ծնվել խորհրդային ֆիզիոլոգ, Ուկրաինայի ակադեմիայի անդամ **Եվգենի Բաբսկին** (1902–1973)։ Ենթադրում ենք, որ նրա մայրը եղել է հայուհի։ Մեղրիում է ծնվել ազգությամբ լեզգի մարզիկ, հունահռոմեական ըմբիշ **Վիտալի Ռահիմովը** (ծն. 1984), որն ապրում է Ադրբեջանում։ Սյունիքում են ծնվել նաև մի քանի ադրբեջանցի գործիչներ, որոնցից ամենանշանավորը, թերևս, նկարիչ **Հուսեյն Ալիևն** է (1911–1991)՝ տխրահռչակ Հեյդար Ալիևի ավագ եղբայրը։ Չգիտենք, թե ինչ հանգամանքներում է նա աշխարհ եկել Ջոմարդլուում՝ հայոց պատմական Թանահատ գյուղում…

Ամփոփելով կարող ենք նշել, որ Սյունյաց աշխարհը, որը տվել է բազմաթիվ ականավոր դեմքեր հայոց պատմությանը և մշակույթին, Հայաստանի այլ շրջանների համեմատ՝ քիչ է կրակ տվել օտար քուրաներին, սակայն եղած սակավաթիվ անձինք էլ, ինչպես տեսանք, ուշագրավ են ու գունեղ։ Եվ մաղթելի է, որ սյունեցին միշտ կառչած մնա իր չքնաղ ու հերոսական բնաշխարհին և երբեք ստիպված չլինի բախտ որոնել օտար հորիզոններում, այլ իր տաղանդն ու աշխատասիրությունը մշտապես ծառայեցնի հայրենի եզերքի շենացմանը։

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Բախչինյան Ա., Հայազգի գործիչներ. Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը (կենսագրական հանրագիտակ), Երևան, 2002։
2. Բախչինյան Ա., Հայերը համաշխարհային պարարվեստում, Երևան, 2017։

1 Տե՛ս Վեճ կճուճի համար (կամբոջական հեքիաթ), քմեր լեզվից թարգմանեց Լաուրա Դաուն Մինասյանը, «Իմ մոլորակը», Երևան, 2013, թ. 3, էջ 6։

**ARTSVI BAKHCHINYAN - OUTSTANDING WORLD FIGURES OF SYUNIK ORIGIN -** From Syunik region, unlike other Armenian regions, emigration was relatively small. Dozens of Armenians with Syunik roots - cultural figures and academicians in humanities have worked in different countries around the world. Among them are four Russian academicians in humanities from Minasian family, outstanding Latvian ballet figure Helēna Tangijeva-*Birzniece*, Turkmen ballerina Edisa Sarvazyan, Bulgarian pianist Julia Ganeva, Russian film actor Dmitri Kharatyan and many others. There were also several representatives of national minorities of Armenia born in Syunik running career in various countries.

***Key words:*** Syunik, Syunik roots, Minasyan family, ballet dancers, foreigners born in Syunik.

**АРЦВИ БАХЧИНЯН - ВЫДАЮЩИЕСЯ МИРОВЫЕ ДЕЯТЕЛИ СЮНИКСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ -** Эмиграция из Сюникской области, в отличие от других регионов Армении, была относительно небольшая. Однако в разных странах мира фигурировали десятки армян со сюникскими корнями - деятели культуры и гуманитарных наук. В их числе: четверо представителей семьи Минасян в сфере гуманитарных наук России, выдающийся деятель латвийского балета Елена Тангиева-Бирзниеце, туркменская балерина Эдиса Сарвазян, болгарская пианистка Джулия Ганева, российский киноактер Дмитрий Харатян и многие другие. Среди этих имен были также несколько представителей национальных меньшинств Армении, родившихся в Сюнике. Несколько представителей национальных меньшинств Армении, родившихся в Сюнике, также вели деятельность в разных странах.

**Ключевые слова:** Сюник, сюникские корни, семья Минасян, танцоры балета, иностранцы, родившиеся в Сюнике.